**2(983).** Իմ ըրեխանցը մատաղ ըլեմ:

3(**984**). Ղաքիտ մեռնեմ:

**4(985).** Մատաղ քե:

**5(986).** Մեռնեմ սըհա̈նց:

**6(987).** Ոտիտ տակն ընգնեմ:

**7(988).** Ցավըտ տանեմ:

8(989.) Քու ոտի տակի թօզը տա̈ռնա̈մ:

## ԵՐԴՈՒՄՆԵՐ

**1(990).** Ես հացիցն եմ խնդրել, որ…

**2(991).** Ըրեխանցս արևը:

3(992). Էն աստոծը:

**4(993).** Էն խաչը վկա:

**5(994).**Իմ ախպոր արևը:

6(995).Իմ հորն ը մոր կերեզմանը:

**7(996).**Յորըս արևը:

**8(997).**Յորըս կերեզմանը:

9(998).Սուտը մեռնի:

10(**999**).Վա՜յ, Ֆուքի:

11(**1000**).Քոռանամ, թե սուտ եմ ասըմ:

## ԳԱՂՏՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1(**1001**). Այսինչը (Ըռաքելը) չարըդ
տարավ:
(Իջևանում հանգուցյալի մահը
գուժելիս չեն ասում մեռավ):

**2(1002).** Ծղնոտի վրա̈ ծնված[1]:

**3(1003).** Մոլլի խարջը տալ[2]:

## ԱՐԳԵԼՔ-ԲԱՆԱՁԵՎ

1(**1004**). Ով որ խոսա՝ խոստոփ անի,
Մկնըկլիրը կորտոփ անի:

2(**1005**). Ով որ խոսա՝ խոստոփ անի,
Կադանի[3] կ…-ը կորտոփ անի[4]:

## ԱՆԵԾՔՆԵՐ

**1(**1006). Ա՛ ազըզամեռ:

**2(**1007). Ա՛ բեմուրազ:

**3(**1008). Ա՛ գյուլլեն նրա ոռը մտնի:

---

[1] Վաղ ժամանակներում աղքատ կանայք ծննդաբերում էին ծղոտի վրա, որովհետև հնարավորություն չունեին կտոր գնելու: Հետագայում «ծղոտի վրա ծնված» արտահայտությունը տրվում էր այն նորածինին, որի մայրը ծննդաբերության ժամանակ մահանում էր: Հավանաբար ծղոտի վրա ծննդաբերելը նաև ընչազրկություն էր նշանակում, և այդ հատկանիշը փոխանցվում էր նորածնին, որը զրկվում էր մորից: Ըստ բանասացի՝ այս արտահայտությունը Իջևանում տարածված է եղել, և իր հորեղբոր աղջկան նույնպես կոչել են «ծղնոտի վրա̈ ծնված», որովհետև նրա մայրը ծննդաբերության ժամանակ մահացել է (ծանոթ. բանասաց Ե. Սիմոնյանի):

2 Իջևանում այս այլաբանական արտահայտությամբ երեխային կամ որևէ մեկին առավոտյան հարցնում են՝ «Քյնա̈ցիր մոլլի խարջը տը՞վի՞ր»: Այսինքն՝ ցանկանում են իմանալ երեխան զուգարան գնացել է՞ փորը թեթևացնելու համար, թե՞ ոչ:

[3] Կադան - տղամարդու անուն է (ծանոթ. բանասացի):

[4] Այս բանաձևն ասվում է տըփնուկի (պահմտոցի) կամ այլ խաղի ժամանակ, որպեսզի խաղի մասնակիցները չխոսեն, այլ լռություն պահպանեն; Այս յուրօրինակ տաբու-բանաձևը կարող է ասվել նաև այլ անուններով, այսինքն՝ երկրորդ տողի առաջին բառը կարելի է փոխարինել կենդանիների (էշ, շուն և այլն) և ծանոթ մարդկանց անուններով; Այս բանաձևն ասվում էր նաև քնելուց առաջ, որ երեխաները անկողնում չխոսեին (ծանոթ. բանահավաքի):